

ՀԱՅԿԱԿԱՆ ՉԱՐԴԱԽԼՈՒԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԻՑ

ՎԱՆԻԿ ՎԻՐԱԲԵԱՆ (vanik.virabyan@mail.ru)

Չարդախլուն (Խաչիսար, Չարդակլու, Չարդախլի, Չարտախլու, Чардахлы, ադրբ. Çardaqlı) հինատուրց հայկական գիտ է, որը ներկայումս գտնվում է Ադրբեջանում՝ Շամխոր քաղաքից 22 կմ հարաւ-արեւմուտք՝ չորս կողմերից լեռներով շրջափակուած գոգավորութիւնում: Այն ժողովրդական ստուգաբանութեամբ նշանակում է *«չորս լեռների միջեւ ընկած բնակավայր»*: Այս անուան ատուգաբանութեան իր տարբերակը ներկայացնելիս յուշարձանագէտ Սամուէլ Կարապետեանը դիմում է Յովհաննէս Գասպարեանին. *«Գիւղն իւր անունը ստացել է ոմանց ասելով «չարդախ», իսկ ոմանց ասելով՝ պարսից «չհարդաղ» բառից ... ոմանք ընդունում են այս գիւղում չորս սար գտնուելուն համար, որոնք են Չախրեօլի, Ղարադաղ, Ղարամօլլի եւ Բարձր Խաչ կամ Խաչեար»*¹:

¹ Յովհ. Գասպարեան, «Չարդախլուն եւ նրա պատմութիւնը», *Նոր Դար*, 1889, N 197, էջ 3: Ներկայումս գիտականօրէն անընդունելի պատմագիտական նոր գաղափար է հրամցում. գիտական շրջանառութեան մէջ է դրուած *«Հիւսիսային Արցախ»* արհեստական հասկացութիւնը, որի գլխատուր ջատագովը յուշարձանագէտ Սամուէլ Կարապետեանն է, ըստ որի Հայոց Ուտիք աշխարհի 3 գաւառներ ներառուած են իր իսկ կողմից ներկայացուած եւ իր կողմից պայմանականօրէն *«Հիւսիսային Արցախ»* անուանուող երկրամասի մէջ, որը ժխտողական մօտեցում է արդէն վաղուց ձեւաւորուած գիտական մտքի եւ պատմագիտական տեսակէտի հետ, քանզի յայտնի է, որ Ուտիքը Արցախ աշխարհից յետոյ ընդամէնը Հայոց Արեւելից Կողմանց հիւսիսային երկրորդ նահանգն է. առաւել եւս որ հեղինակն ինքը չի ժխտում, որ *«Հիւսիսային Արցախ»* կոչուած երկրամասը ըստ *Աշխարհացոյցի* եւս ներառում է Մեծ Հայքի Արցախ եւ Ուտիք նահանգներից երեքական գաւառներ՝ Արցախից՝ Քուստի Փառնես, Կողթ եւ Մեծ Կողմանք, իսկ Ուտիքից՝ Տուս-Քուստակ, Գարդման եւ Շակաշէն գաւառները: Մէկ կարելուր հանգամանք եւս. Կարապետեանի այս հատորից այն տպաւորութիւնն է առաջանում, որ Շամխորի եւ այլ շրջանների գիւղերի հայկական բնակչութիւնը եկուոր է, եւ այդ բնակավայրեր են տեղափոխուել այլ վայրերից, որ այդ գիւղերի բնակիչները տեղաբնիկներ չեն, ինչը պատմականօրէն սխալ է եւ կարիք ունի վերանայման եւ ջուր է լցնում ադրբեջանցի կեղծարար «գիտնականների» ջրաղացին: Այդ ամէնը պարզապէս գիտական ապատեղեակութիւն է, ինչն ակնյայտօրէն երեւում է հեղինակի աշխատանքի հետազօտութիւնից, չնայած ինքը հեղինակը հակասելով իրեն գրել է, որ *«որ ներկայիս գիւղի տարածքը բնակեցուած է եղել պարսկական անյիշելի ժամանակներից»*, սակայն թէ ովքե՛ր են բնակեցրել այն՝ չի պարզուած եւ հասկանալի չէ գիւղի անցեալի եւ ներկայի հայկականութեան կապը (Սամուէլ Կարապետեան, *Հիւսիսային Արցախ*, RAA *Գիւրական ուսումնասիրութիւններ*, գիրք 2, Երեւան, ՀՀ ԳԱԱ Գիտութիւն հրատ., 2004, էջ 9, 74, 510. նաեւ՝ Թ. Խ. Յակոբեան, Ստեփան Տ. Մելիք-Բախշեան, Յովհաննէս Խ. Բար-

Չարդախլու հայկական գիւղի հին, բազմադարեան մշակոյթի տարեգրութիւնը իր արմատներով գալիս է դարերի խորքերից: Դա են վկայում նրա բազմաթիւ յուշարձանները՝ բերդերի մնացորդները, խաչքարերը, տարբեր կիկլոպեան կառոյցները, տապանաքարերը, մատուռները, Ս. Աստուածածին եկեղեցին, Վահրամ իշխանի ԺԳ.-ԺԴ. դարերի երկու բերդերը՝ Շամխորի եւ Ղալաբոյունիի²:

Գիւղը նախկինում գտնուել է Խաչասար լեռան արեւելեան լանջին, իսկ այնուհետեւ այն աստիճանաբար տարածուել է նաեւ արեւմտեան լանջի վրայ: Հայկական Չարդախլուն ընկած է Զագիր գետի ափին (այժմեան Ադրբեջանի Հանրապետութեան Շամխորի շրջանի) եւ գտնուում է պատմական Գարդմանաց (Ուտիք) գաւառի հնամենի Գանձակ քաղաքից ոչ-հեռու, Շամխոր-Գետաբէկ մայրուղու վրայ: Շահեկան է Մակար եպի. Բարխուդարեանցի գիւղի բնութագրական նկարագիրը. «Չարդախլու գիւղ. հիմնուած է Զակիրի արեւմտեան կողմում մի հարթավայր տեղում. որի բարձ. 5181, բնակիչք բնիկ, հողն արքունի, անջրդի, հացաւէր. Տեղական բերքերն նոյն, սննդարար օղն, կլիման եւ ջուրն, երկար կեանք 80-90 տ. եկեղեցին Սուրբ Աստուածածին, հոյակապ, քահանայ մի: Գիւղիս մօտ է Ոսկան նահապտակ անուամբ ուխտարարողին, որ Բուլանլուղ եւս է կոչում»³:

Ահա եւ մի այլ հետաքրքիր դիտարկում. «... Ը.-Ժ. դարերի որոշ պատմական աղբիւրներ ...կցկտոր տեղեկութիւններ են տալիս որ այդ տեղանքում ապրել են հայեր եւ այն կոչուել է Չարդախ (պարսկերէն 14) եւ եղել է Գարդմանաց իշխանութեան 14րդ բնակավայրը, մի այլ պատում նշում է, որ չարդախ (չեար դաղ) նշանակում է չորս սար, որոնց փէշերին փռուած է գիւղը եւ որը յետագայում տառադարձուել է Չարդախլու անունով, իսկ վրացական բառարանում այն թարգմանուած է «Ոսկէ հովիտ»: Սարերից մէկի բարձր գագաթին դրուած էր մեծ խաչքար, որը Սահակ Սեւադայի ժամանակաշրջանից էր (այդպէս են բնորոշում հնագէտները)» եւ յիշատակում է նրա յաղթական այցը Չարդախլու: Այդ ժամանակուանից էլ այն ստացել է Խաչի սար անունը, իսկ քաջ Սեւորդեանների կողմից այդ լեռներից բխող սառնորակ ու անուշահամ ջրերի շուրջն աճած անտառը դարձել է Սեւորդեանների հանգստավայրը, որը յետագայում, երբ գրաւել են թուրքերը, Սեւ որդիները թարգմանել են կարա օղլի-Ղարամօղլու⁴:

Հինաւորց հայաբնակ յայտնի այս գիւղը դարերի ընթացքում հանդիսացել է շրջակայ հայկական տասնհինգից աւելի գիւղերի յենարանը եւ

սեղեան, Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հյոր. 3, Երեւան, ԵՊՀ հրատ., 1991, էջ 220:

² Մակար Եպս. Բարխուտարեանց, Արցախ, Երեւան, «Լուսակն» հրատ., 2018, էջ 19, 208, 222, 326-27, 436. նաեւ՝ Կարապետեան, էջ 510:

³ Բարխուտարեանց, էջ 320:

⁴ Չարդախլու. հայկական գիւղի պատմութիւն, կազմ.՝ Լ. Աղամեան, Երեւան, «Զանգակ-97» հրատ., 2004, էջ 9:

անվտանգության երաշխաւորը⁵, հայ մարտական ոգու արտացոլանքը եւ խորհրդանիշը, որը հարթավայրի թաթարներին խանգարում էր հասնել լեռնային արօտավայրերին⁶, հող ստեղծելով բախումների համար տարբեր ժամանակներում: Մասնաւորապէս ԺԷ.-ԺԸ. դարերում յայտնուելով նաեւ լեզգիների, վրացիների, թուրքերի ու թաթարների պարբերաբար կրկնուող աւերիչ ասպատակութիւնների կենտրոնակէտում, իվերջոյ այն գրեթէ իսպառ հայաթափուել էր եւ ամայացել:

Ըստ 1826-28 ռուս-պարսկական պատերազմի մասնակից, փոխ-գորավար Մորից Աւգուստի Կոցերուի տուեալների, որոնք շրջանառուել են ադրբեջանցի պատմաբան Իռադա Մալիք Գիզի Մամեդովայի կողմից, *որը եւս Չարդախլուն հայկական գիւղ է համարում*: Մամեդովայի բերած փաստերի համաձայն գիւղը 1826ին ունեցել է 113 տուն, 738 բնակիչ, որից 387ը՝ տղամարդ, 351ը՝ կին⁷: Իսկ արդէն հայկական աղբիւրների, եւ մասնաւորապէս պատմաբաններ Ստեփան Մելիք-Բախշեանի եւ Թադեոս Յակոբեանի կողմից բերուած փաստերի համաձայն 1907ին գիւղն ունէր 1863, իսկ արդէն 1975ին՝ 4000 բնակիչ: Ըստ Կարապետեանի՝ Ադրբեջանի Խորհրդային Հանրապետութեան արխիւներից վերցուած եւ միտումնաւոր նուազեցրած թուերի իբր թէ 1976ն կազմել է 1526 մարդ, 1985ին՝ դարձեալ նոյն կեղծ աղբիւրի հիման վրայ՝ 2527 մարդ⁸, որում կարծում ենք աւելի համոզիչ են եւ իրական Մելիք-Բախշեանի եւ Յակոբեանի փաստարկուած տուեալները: Չարդախլուի հայ բնակչութիւնը հիմնականում զբաղում էր հացահատիկային մշակաբոյսերի մշակմամբ, այգեգործութեամբ, ինչպէս նաեւ անասնապահութեամբ⁹:

Գիւղի հերոսական տարեգրութիւնը դարերի խորքից է գալիս, արմատներ գցելով տեղի աւանդապաշտ հայերի ամէնօրեայ կեանքում: Որպէս օրինակ կարելի է նշել 1877-78 ռուս-թուրքական պատերազմի հերոս եւ

⁵ Բարխուտարեանց, էջ 19, 208, 222, 326-27, 436:

⁶ Կարապետեան, էջ 74:

⁷ И. М. Мамедова, «Статистические описания Шамшадиньской и Казахской дистанции» как источник для изучения истории населения Закавказья (первая треть XIX ст.), (Ի. Մ. Մամեդով, Ղազախի եւ Շամշադինի ուղեմասերի վիճակագրական նկարագրութիւնը որպէս Անդրկովկասի բնակչութեան պատմութեան ուսումնասիրութեան աղբիւր (ԺԹ. դարի առաջին քառորդ), «Արեւելագիտութիւն», Ուկրաինայի ԳԱԱ Ա. ԵՈՒ. Կրիմսկու անուան արեւելագիտութեան ինստիտուտ, 2012, հմ. 59, էջ 104-20 (www.irbis-nbuv.gov.ua >cgiirbis_64. նաեւ՝ http://www.library.univ.kiev.ua/ukr/elcat/new/view_order_new1.php3?source=1&prev=0&page=0&parentId=1563806&parentName=%D1%F5%EE%E4%EE%E7%ED: բեռնման օրը՝ 25 Յուլիս 2021:

⁸ Կարապետեան, էջ 512-513:

⁹ Յակոբեան, Մելիք-Բախշեան, Բարսեղեան, էջ 220:

ռազմական գործիչ փոխ-գորաւար Արշակ Տէրղուկասովի անունը, որը սերում է Չարդախլուից, եւ որի հայրը եղել է գիւղի քահանան¹⁰:

1905-06՝ այն Ելիզաւետպոլի նահանգի Ելիզաւետպոլի գաւառի կազմում էր երբ հրահրուեցին հայ-թաթարական կռիւները: Ըստ աւանդութեան, Խաչասար լեռան վրայ եղել է մեծ զանգ, որով շրջակայ բնակիչներին նախազգուշացրել են թշնամիների յարձակումների մասին: 1902-03՝ ահաբեկչութիւնից եւ հայկական ունեցուածքի վերադարձից յետոյ, ինչպէս նշել է Ալեքսանդր Խատիսեանը՝ «*ռուսական վարչակարգի մութերի կողմից հայ-թաթարական ջարդեր կազմակերպուեցին, որում հայկական ինքնապաշտպանութիւնը փրկարար դեր կատարեց*»¹¹, որի խարդաւիղ մթնոլորտի մէջ էլ ներքաշուեց ոչ միայն Գանձակի ողջ գաւառը, այլեւ հայկական Չարդախլուն՝ շրջակայ բազմաթիւ շէն գիւղերով հանդերձ:

Չարդախլուի հայերը 1905-06ի հայ-թաթարական ընդհանրումների ժամանակ աչքի ընկան իրենց բացառիկ քաջութեամբ եւ մարտական աննկուն վարքագծով, չնայած գիւղի ռազմավարական անյարմար դիրքին, որի կողքին Հայի Գետաբէկ (Գետաբակ), Կրզէն, Սարով, Ղարադաղլու եւ Բադաքենդ (Բադա-Բադենք) գիւղերն աւելի լաւ ռազմավարական յենակետային դիրքեր ունէին: Գիւղի մարտակոորով բնակչութեան ոգեկոչներից է եղել 1894-1908՝ գիւղի ծխատէր քահանայ Գէորգ Տէրստեփանեան-Մանասեանցը¹², որն իր անգիջում եւ անձնուրաց նուիրումով եւս կարելորդ էր է խաղացել ինքնապաշտպանութեան կազմակերպման գործում:

Չարդախլուն մշտապէս եղել է թուրքական յարձակողականի գլխաւոր թիրախը, քանզի կոտորելով չարդախլուեցիների դիմադրութիւնը, նրանց ամէնայն հաւանականութեամբ կը յաջողուէր ջարդել երկրամասի մնացեալ գիւղերի դիմադրութիւնը եւ նուաճել բնիկ հայկական այս երկրամասը: Դա ցայտուն արտայայտուեց ցարիզմի կողմից հրահրուած 1905-06ի հայ-թաթարական բախումների ժամանակ, չնայած աղբրեջանցի պատմաբան Սեփինջ Ալիեան ցարական իշխանութիւնների հետ միասին, համերաշխուելով նրանց կեղծ ազգային քաղաքականութեան հետ «*հայկական*

¹⁰ Ռ. Յովհաննիսեան, *Աղբրեջանի հայոց թեմ. Հայ Առաքելական Եկեղեցու թեմերն աշխարհում, հրք. 6*, Երեւան, «Լուսակն» հրատ., 2020, էջ 60:

¹¹ К. Р. Амбарцумян, «Русская Революция и образование Республики Армения на Кавказе (1917–1918 гг.)» (Կ. Ռ. Համբարձումեան, Ա. Ի. Խատիսովի «Ռուսական յեղափոխութիւնը եւ Հայաստանի Հանրապետութեան կազմաւորումը Կովկասում (1917-1918 թթ.)», հրապարակումներ եւ թարգմանութիւններ, «Երկխօսութիւն ժամանակի հետ», 2017, հմ. 60, էջ 365-83 (www.academia.edu/38722700/K._P._AMBARCIUMYAN_Хатисов_А._И._Русская_революция_и_образование_Республики_Армении), ներբեռնում՝ 20 Յուլիս 2021:

¹² Կարապետեան էջ 5, 17:

ազգայնական» ՀՅ Դաշնակցությանը եւս մեղսակից է համարում այդ կոնկրետին, ինչը ադրբեջանական շինծու հերթական պնդումներից է¹³:

1905 Նոյեմբերի 18ին թուրքական զօրուժը պաշարում է Չարդախլուն, Բադան, Գետաբէկի շրջանն ու գերմանական «Սիմմենս» ընկերության պղնձաձուլական գործարանը եւ մերձակայ Ղազախ գիւղը, վստահ լինելով, որ այդ մարտավարութեամբ իրենց կը յաջողուի այդ գիւղերին շրջափակել, կտրել դրսից եւ միմեանց աջակցելու որեւէ օգնութեան յոյսից, եւ վերջ տալ այդ բնակավայրերի դիմադրութիւնը: Այս նպատակին հասնելու համար, ըստ Համլէտ Գէորգեանի, թուրքերը հետախուզում են՝ պարզելու իրենց դիմադրող գիւղերի տեղի, մարտական ուժերի քանակն ու հնարատրութիւնների մանրամասները: Եւ քանի որ Շամխորի շրջանի այդ գիւղերից ամենաուժեղը, հետեւաբար թուրքերի համար ամենավտանգատրը հենց Չարդախլուն էր, ուստի թուրքերը որոշում են իրենց հիմնական ուժերով չորս կողմից յարձակուել Չարդախլուի վրայ եւ այն իսպառ ոչնչացնելուց ու թալանելուց յետոյ միայն հարուածի ուղղութիւնը կենտրոնացնել Գետաբէկի, այնտեղ գտնուող գործարանի եւ Ղազախի վրայ¹⁴: Սակայն գիւղի պաշտպանները ոչ միայն չեն ընկճում, այլեւ ընդունում են հակառակորդի մարտահրաւերը, ընտրում ճիշտ մարտավարութիւն եւ մինչ վերջ համբերատար սպասում են, որպէսզի թուրքերը մօտենան իրենց դիրքերին եւ միայն դրանից յետոյ վճռական հակահարուած են տալիս թուրքերին՝ դիպուկ համազարկեր արձակելով նրանց վրայ, որոնք միքանի զոհեր տալով փախչում են անակնկալի գալով հայերի քայլից¹⁵:

Այդուհանդերձ, թուրքերը համալրելով իրենց ուժերը, յաջորդ օրը՝ Նոյեմբերի 19ին ստուար հրոսակախմբերով վերսկսում են յարձակումը: Չնայած դրան, Չարդախլուի պաշտպանները կարողանում են ամուր ինքնապաշտպանութիւն կազմակերպել եւ յաջողութեամբ կրկին ետ մղել հակառակորդի յարձակումները¹⁶, այսպիսով կարողանալով ձախողել հայկական Չարդախլուն զափելու թուրքական ծրագրերը, որից յետոյ առժամանակ թուրքերի յարձակումները դադարեցում են, թուրքերը մի որոշ պահի կենտրոնանում են այլ խնդիրների վրայ, «բայց թէ՛ հայերը եւ թէ՛ թուրքերը սպասողական դիրք» են բռնում եւ «իրանց պատրաստ են պահում ամէն մի անսպասելի պատահարի համար»:

¹³ Севиндж Исрафил Гызы Алиева, *Азербайджан и народы северного Кавказа (XVIII – начало XXI вв.)* (Սեփնջի Իսրաֆիլ Գիզի Ալիեա, Ադրբեջանը եւ Հիւսիսային Կովկասի ժողովուրդները (XVIII-XXI դ. սկիզբ), Բաքու, «Արեւելք-Արեւմուտք» հրատ. տուն, 2010, էջ 292:

¹⁴ Հ. Գէորգեան, *Ազադագրական պայքարի կովկասեան ճակատը*, Երեւան, հեղ. հրատ., 2010, էջ 277:

¹⁵ Նոյն, էջ 277:

¹⁶ Նոյն, էջ 277-78:

Առհասարակ, այդ ժամանակույ թերթերը շատ յստակ փաստում են թուրքերի ոտնձգութիւնների մասին Գանձակի գաւառի հայկական բոլոր գիւղերի, այդ թւում եւ Չարդախլուի նկատմամբ. *Մշակը* գրում է, որ Նոյեմբերի 18ին Չարդախլու գիւղի մի վաճառական՝ Բաբաջանեանը, որ եղել էր Դալիարի կայարանում եւ լսելով այնտեղ Դալիարի բէկերի ու Գանձակի թուրքերի կողմից առաջ բերած ընդհարման եւ կոտորածի, հրահրուած կողոպուտի եւ հայերի խանութների թալանի մասին, ինչը հարկադրել է ժողովրդին փախչել դէպի գերմանական Աննենֆելդ (Լենինո) կայարանը, պատսպարուելով գերմանացիների զոմերում, ձի է հեծնում եւ գնում Ռուստամ բէկի որդի Իսկանդէր բէկի մօտ՝ աղաչելով հայերին ազատել կոտորածից, որը դրա դիմաց պահանջում է 800 ռ. փրկագին, սակայն փրկագինը արդիւնք չի տալիս: Այդ խաբէութիւնից եւ անասելի չարչարանքներից ու բռնարարքներից յետոյ հայերին միայն Նոյեմբերի 25ին բաց են թողնում¹⁷: Դալիարի այս դէպքերը չարդախլուեցիները մեկնաբանում են որ չի կարելի վստահել եւ ապաւինում են դիմադրութեան:

Թուրքական հրոսակախմբերը երթեւեկում են եւ կողոպտում պահեստներն ու մարդկանց տները: Թերթը յայտնում է նաեւ «*Բաղա հայ գիւղի աներման եւ բնակիչների փախուստի մասին ...որ գիւղական ազգաբնակչութեան միայն մի մասն է կարողացել հասնել մինչեւ Չարդախլու, իսկ միւս մասը, բաղկացած 470 հոգուց, որոնց մէջ եղել են միայն 25 տղամարդ, բաժանուել են թուրք հրոսակների շարժումների պայքանով եւ մնացել կտրուած իրենց համագիւղացիներից*»¹⁸: Այդ մասին փաստում է նաեւ Քաջբերունին. «*Չկարողանալով չափուել Չարդախլուի հետ՝ հրոսակախմբերը շրջուեցին եւ ուղղուեցին դէպի 19 վերստ հեռաւորութեան վրայ գտնուող գիւղախմբերից անջապ գտնուող հարուստ ու բարգաւաճ Բաղաքենդ եւ պաշարեցին այն: ...Բաղայից դէպի ամենամօտիկ հայաբնակ վայրը 14-15 վերստի վրայ գտնուող երկաթուղու Չեզամ կայարանն էր, իսկ ամենամօտ գիւղը Ելիզաւէտպոլի գաւառի Չարդախլուն, որ Բաղայից հեռու էր 20 վերստ*»¹⁹: Բաղա, Գետաբէկ եւ Ղազախ գիւղերի մագապործ հայութիւնը հաւաքուեց Չարդախլու գիւղում: Հուսկ, թուրքերն իրենց լաւագոյն ուժերը կենտրոնացրին Չարդախլուի դէմ²⁰:

Բաղաքենդ եւ Ղազախ գիւղերի գրաւումից եւ աւազակային ալան-թալանից յետոյ, թուրքերը Նոյեմբերի 25ին նոր յարձակում են պատրաստում Չարդախլուի դէմ եւ նորից պաշարում գիւղը, որը Գանձակի գաւառի արեւմտեան մասի ամենամեծ եւ շէն գիւղն էր՝ հարուստ մարտական մեծ ա-

¹⁷ «Վերջին տեղեկութիւններ», *Մշակ*, Թիֆլիս, 29 Նոյեմբերի 1905:

¹⁸ «Վերջին տեղեկութիւններ», *Մշակ*, 11 Դեկտեմբերի 1905, N 246:

¹⁹ Քաջբերունի, *Բաղա գիւղի աներումը*, Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1910, էջ 15:

²⁰ Հր. Սիմոնեան, *Ազգապահպան պայքարի քառուղիներում, չորս գրքով, գիրք I*, Երեւան, «Հայագիտակ», 2003, 452-53:

լանդոյթներով: Չնայած թուրքերը հասկանալով, որ գործ ունեն անելի կազմակերպուած մարտական ներուժ եւ փորձ ունեցող հայկական գիւղի հետ, նրանք նորից միջանի գրոհներ են ձեռնարկում, որոնք դարձեալ անարտում են պարտութեամբ: Այնուհետեւ թուրքերը դադարեցնում են յարձակումները՝ բաւարարուելով հեռուից համազարկեր արձակելով գիւղի ուղղութեամբ, որից յետոյ դադարեցնում են այն, որին հայերը վստահ հակադարձում են: *Մշակը* գրում է Նոյեմբերի 28ի դէպքերի մասին.

Գանձակում սկսուած հրդեհը տարածում է գաւառում ու գնալով անելի լայն ծաւալ ստանում... Հայ ազգաբնակչութիւնը թողնուած է ճակատագրի կամքին... Այնտեղ միմիայն ապահով են զգում իրանց հայերը, որտեղ կայ կազմակերպուած ինքնապաշտպանութիւն, որտեղ հայը զէնք ու ռազմամթերք ունի:

Այսօր Գանձակում նամակներ ստացուեցին Չարդախլուից, որտեղ հաւաքուած են աներուած Գետաբէկ, նրան կից գտնուող Ղազախ գիւղի ու Բաղաքենդ հայ գիւղի հայերը, կորցրած տուն, տեղ, կայք, կարողութիւն, կորցրած շատերն իրենց սիրելիներին: Չարդախլուն շրջապատուած է թուրք հրոսակախմբերով ու խուժանով, որոնք ամէն լոպէ փորձեր են անում ներս խուժելու գիւղը ու բնաջինջ անելու ազգաբնակչութիւնը: Հայերը հերոսական ջանքեր են անում ինքնապաշտպանութեան համար, հարուածում են թշնամուն, պատժում են նրան ըստ արժանւոյն, բայց նա իր թուական գերազանցութեան շնորհով կարողանում է պահպանել իր դիրքերը ու առաջ շարժուել նոյն իսկ:

Գետաբէկը ու նրան կից գտնուող Ղազախ հայաբնակ գիւղը (երկուսում էլ կը լինեն մօտ 100 տուն հայ) ենթարկուել է շրջակայ թուրք խուժանի յարձակմանը Նոյեմբերի 22-23ին: Հայերի խանութները եւ տները կողոպտուել են ու հրդեհուել (գործարանին կից խանութներ շատ կան), ազգաբնակչութեան մի մասը ենթարկուել է սրածուրան, իսկ միւս մասը, թուով անելի նշանաւոր, փակուել, պատսպարուել է Չարդախլու գիւղում, զրկուելով իր բոլոր ունեցածից:

Գետաբէկում սպանուել է տեղական ռուս քննիչը նոյն իսկ... Գետաբէկ, Ղազախ ու Բաղաքենդ գիւղերից փախցրել, անհետացրել են երիտասարդ կանանց ու աղջիկներին...

Կողոպտուած ու հրկիզուած բաղաքենդցիք թափուել են նոյնպէս Չարդախլու գիւղը, որի դէմ ուղղուել են այնուհետեւ Գետաբէկի շրջանի գազանաբարոյ Այրումների ու [Ալահիար բէգ] Ջուլդադարովների լայնածաւալ կալուածքներում վխտացող կազմակերպուած թուրք հրոսակախմբերի ուժերը²¹:

Եւ միայն երբ Նոյեմբերի 29ին Գանձակից Չարդախլու է հասնում Գանձակի ինքնապաշտպանական կոմիտեում իր անձնուրացութեամբ եւ խիզախութեամբ աչքի ընկած եւ հայ բնակչութեան շրջանում մեծ հեղինակութիւն վայելող խմբապետ, բուլանովսցի Մարտիրոս վարժապետ

²¹ Ստ. Տէրաւետիքեան, «Դէպքերը Գանձակի գաւառում», *Մշակ*, 3 Դեկտեմբերի 1905. նաեւ՝ Աւ. Սահակեան, «Գանձակի դէպքերը», *Արշալոյս*, Թիֆլիս, 4 Դեկտեմբերի 1905:

Պետրոսեանցի գլխաւորած զինեալ հայդուկախումբը²², թուրքերը որոշ ժամանակ դադարեցնում են իրենց յարձակումները, մտադրուելով նոր համալրումներ ստանալ եւ նոր հնարաւորութեան դէպքում՝ յարմար պահի նորից վերսկսել իրենց գործողութիւնները Չարդախլուի եւ շրջակայքի հայկական միւս գիւղերի վրայ: Նոյեմբերի 25ից մինչեւ 30ը Չարդախլուի մարտակորով հայերը ետ են մղում հակառակորդի 10ից անէլի յարձակում՝ մեծ կորուստներ պատճառելով: Իսկ ցարական զօրքն ու ոստիկանութիւնը հանդիսատեսի դերում էին²³:

Հայկական Չարդախլուի վրայ թուրքական գլխաւոր յարձակումներից մէկը տեղի է ունենում Նոյեմբերի 30ին, որը սակայն վճռաբար ետ է մղում: Այդ օրերի իրադարձութիւնների տարեգիր Ա-Դօն գրում է «...նորից թուրք խուժանը դարձաւ դէպի Չարդախլու: Նոյեմբերի 25ից սկսած մինչեւ 30ը պարբերաբար յետ մղուելով եւ նորանոր թարմացած ուժերով նոր յարձակումներ գործելով, նա չոգնեց:...Նոյեմբերի 30ին տեղի ունեցաւ վճռական յարձակումը եւ այս անգամ խուժանը յետ փախաւ մեծ կորուստներով: Հայերից սպանուեց այդ կողում մի հոգի, բայց լաւ հոգի. դա չարդախլուեցի Շահէնն էր»²⁴:

Չնայած Գէորգեանը նշում է, որ վճռական այդ ճակատամարտը տեղի է ունեցել Նոյեմբերի 23ին, իսկ Ա-Դօն՝ Նոյեմբերի 30ին՝ համադրելով փաստերը, ակնյայտ է դառնում, որ խօսքը գնում է Նոյեմբերի 30ին թուրքերի կողմից Չարդախլուի վրայ ձեռնարկած գլխաւոր յարձակման մասին, որի մասին Գէորգեանը արժէքաւոր վկայութիւն է բերում, շրջանառուելով մի կարեւոր վաւերագիր. «Մերոնք խմբապետ Մարտիրոս վարժապետի հմուտ դէկավարութեամբ կռուում են այնպէս, որ նրանց նախանձել կարող էին երոպական զօրքերի շարքերում կրուած զինուորները... թուրքերը երկրորդ անգամ են յարձակում. դարձեալ ջարդում են ու բոլորովին յետ նահանջում, թողնելով կռուի դաշտում շատ դիակներ»²⁵:

Սակայն դրանով դէպքերը չեն աւարտում. Աւետիք Սահակեանը Արշալոյսի 1905 Դեկտեմբերի 4ի համարում փաստում է, որ Չարդախլու գիւղը շրջապատուած է միջանի հազար թուրքերով, նոյն օրը մի վաշտ զօրք է մեկնել գիւղ՝ հալածելու համար, իսկ Բաղա գիւղից Մեսրոպ քահանայ

²² Մարտիրոս Ստեփանեան-Պետրոսեանց.- ծն. Արեւմտեան Հայաստանի Տարօն աշխարհի Բուլանուփ գաւառի Եռնջալա գիւղում: 1891ին զինուորագրուել է հայոց ազատամարտին եւ հայդուկային խմբերի կազմում մասնակցել մի շարք կռիւների ընդդէմ թուրքական բռնապետութեան, իսկ 1904ին մասնակցել է Գանձակի նահանգի հայ ինքնապաշտպանական կռիւներին:

²³ Սիմոնեան, էջ 453:

²⁴ Ա-Դօ (Յովհաննէս Տէրմարտիրոսեան), Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում, (Փաստական, վիճակագրական, տեղագրական լուսաբանութիւններով), Երեւան, տպ. Այվազեանց եւ Նազարեանց, 1907, էջ 363:

²⁵ Գէորգեան, էջ 288:

Ստեփանոսեանն էլ մեկնել է Գանձակ՝ հայ գիւղերի համար փրկութեան միջոցներ գտնելու²⁶: Մշակի 1905 Դեկտեմբերի 10ի համարում յիշարժան փաստեր են բերում Դեկտեմբերի 4ի մօտերքը Չարդախլուում տեղ գտած դէպքերի մասին. գրելով կազակների մասին, որոնք

գնում էին Չարդախլու հայ գիւղը, շրջապատուած թուրքերից: Երեք օրից իվեր այդտեղ հրաձգութիւն կայ, իսկ այդ օրը, ինչպէս ասում էին՝ նշանակուած է «շտուրմ»: Պէտք է գիւղը վերցնեն գրոհ տալով. ուղարկել են պահապաններին թնդանօթ բերելու Գանձակից:

Չարդախլուն կարողանում է քաջաբար պաշտպանուել եւ մեծ ջարդեր տալ թշնամուն: Գիւղից եկողները պատմում են, որ չարդախլուեցիներին յաջողուել է յետ մղել թուրքերի բոլոր յարձակումները եւ ներկայումս պաշպանողական դիրքերից յարձակողական դիրք են բռնել ու նրանց մի մասը կոտորելով՝ մի մասին էլ գերի են վերցրել:

Հաւանական է, որ չարդախլուեցիները սկսեն յարձակում գործել այն ձմեռանոցների վրայ, ուր պահուած են Բաղաձորի հայ գերիները: Բաղաձորը ամբողջապէս ոչնչացուած է, գիւղացիների մի մասը զոհ են գնացել կոտորածին, մի մասն էլ գերի են տարուած թուրք բէգերի մօտ, մի մասն էլ պատսպարուել են Չարդախլու գիւղում²⁷:

Այդ ընթացքում թշնամին, ամէն գնով ձգտելով տիրանալ Չարդախլուին եւ հարեւան հայկական գիւղերին, դիմում է տարաբնոյթ սադրանքների, զգալի վնաս հասցնելով հայ խաղաղ բնակչութեանը. Արշալոյսը 1906 Յունուարի 4ին գրում է, որ 1905 Դեկտեմբերի 9ի վիճակով Գանձակի գաւառի Դալիար կայարանում եւ Աննենֆելդ գիւղում կողոպտուել են Չարդախլուի գիւղացիներին պատկանող 5 խանութ, անելի քան 60,000 արժողութեամբ ապրանք, 30ից անելի հայ տներ: Թալանի աւար են դառնում Ս. Տէրմակարեանի եւ Ա. Թարաջեանի 3000 ռ. արժողութեամբ խանութի ապրանքները, որոնք Գանձակի ստացուած լուրերի համաձայն, թալանուել էին այսպէս կոչուած մոռոզեցի թուրքերի կողմից²⁸:

Մարտերը դեռ երկար շարունակուեցին. 1906 Յունուարի 18ին ձեռնարկում է թուրքերի վերջին յարձակումը Չարդախլուի վրայ. թշնամին դիրքեր է զբաղեցնում գիւղից 5 կմ հիւսիս-արեւելք՝ Սանգիար-Թափա կոչուող բլրի վրայ, որն իշխող բարձունք էր եւ շրջապատի նկատմամբ ապահովում էր որոշակի առաւելութիւններ: Սակայն չարդախլուեցիները ժամանակին նկատելով թուրքերի դիրքաւորումները գիւղի մօտակայ սարերի վրայ, երկու կողմից համարձակ գրոհում են եւ փոքրաթիւ ուժերով դուրս մղում հակառակորդին գիւղի մատոյցներից. հրաձգութիւնը շարունակում է մինչեւ երեկոյեան ժամը 5ը: Դրանից յետոյ թուրքերը հաւաքում

²⁶ Ա. Սահակեան, «Գանձակի դէպքերը», *Արշալոյս*, 4 Դեկտեմբերի 1905:

²⁷ Ա. Սահակեան, «Դրութիւնը Գանձակում», *Մշակ*, 10 Դեկտեմբերի 1905:

²⁸ «Հայ-թուրք. ընդհարումներից (վերջին տեղեկութիւններ)», *Արշալոյս*, 4 Յունուար, 1906:

են իրենց սպանուածներին, լքում մարտի դաշտը, չարդախլուեցիներին թողնելով 6 ձի. այսպիսով, թուրքերը տալով զգալի կորուստներ, իսկ Չարդախլուի կորուստները լինում են 1 սպանուած եւ 2 վիրաւոր²⁹: Եւ այսպէս, հայկական Չարդախլուի հայ ինքնապաշտպանական ուժերը հասնում են յաղթանակի, սեփական տունը անառիկ պահելով:

Յառաջի 1906 Յունուարի 24ի համարից էլ տեղեկանում ենք նոյնի մասին, որ Յունուարի 18ին թուրքերը նորից յարձակում են գործում Չարդախլու հայ գիւղի վրայ, սակայն մեծ կորուստ կրելով փախչում են, դիակների մի մասն իրենց հետ վերցնելով, թողնելով 1 դիակ եւ 5 ձի: Հայկական կողմը տալիս է մէկ սպանուած եւ մէկ թեթեւ վիրաւոր: Սակայն թուրքերը գիւղին տիրելու յետագայ փորձերը շարունակում են³⁰:

Յառաջի 1906 Փետրուարի 14ի համարից տեղեկանում ենք, որ դեռեւս Նոյեմբերի 24ից սկսած թուրք-թաթարները «կարաղի փորձեր են անում Չարդախլուի դէմ...Թուրքերը այն համոզմունքի են, որ իրենք կարող են անպարփաժ աւերել հայ գիւղերը, իսկ հայերը պաշտպանուելու իրաւունք անգամ չունեն, քանի որ թուրքը հաւատարիմ հպարակ է, իսկ հայը «կոմիւրաչի», յեղափոխական: Զօրքի հրամանաւորը (Բաշքենդում գտնուող կառավարական զօրքերի հրամանաւորը – Վ.Վ.) իր կարգադրութեամբ աւելի հաստատում է թուրքերի այդ համոզմունքը. նա իսկոյն եւեթ մի ահեղ գրութիւն է ուղարկում Չարդախլու, որով պահանջում է գիւղի հասարակութիւնից անյապաղ իրեն յանձնել թուրքերի մարնացոյց արած չարդախլուեցիներին՝ հակառակ դէպքում գիւղը ենթարկուելու է ոմբակոծութեան: Չարդախլուեցիները խնդրում են ի կարար չաժէլ որոշած պարփոժն այդքան շուր, առանց մանրամասն քննելու գործը, իշխանութեան ներկայացուցչի ուշադրութիւնն են հրաւիրում այն քանի վրայ, որ Նոյեմբերի 1ից սկսած մինչեւ օրս թուրքերից ոչ մինը չի պարփուել: Իշխանութեան ներկայացուցիչը չէ լսում հայերին: Չարդախլուից ներկայացուցիչներ են գալիս Գանձակ ընդհանուր-նահանգապետին գանգաւորելու, բայց ցանկալի յաջողութեան չեն հանդիպում. նրանց ժամանակ է տրուած... ոմբակոծութեան սպառնալիքը դեռ մնում է»³¹:

Յառաջի 1906 Մարտի 7ի համարում կրկին փաստեր են բերում թուրքերի յարձակման եւ Չարդախլուի ոմբակոծման մասին, որտեղ 200ից աւելի տուն, որոնցից աւելի քան 150 տուն հացի գրկանքների մէջ գտնուելով եւ 1905 Նոյեմբերի վերջերից մինչեւ 1906 Մարտ Թիֆլիսի նպաստամատոյց յանձնաժողովից օգնութիւն ստանալով ընդամենը 2000 ռ., եւ ու-

²⁹ Ներսէս Վարդապետ, «Վերջին տեղեկութիւններ», Յառաջ, Երեւան, 24 Յունուար 1906:

³⁰ Ա. Տէրեան, Պարմութիւն հայոց արեւելեան կողմի (Աղվանք, Գարդման, Ուրիք), Երեւան, Լուսակն հրատ., 2015, էջ 311-12:

³¹ Ստ. Տէրաւետիքեան, «Ռմբակոծելու մի նոր սպառնալիք», Յառաջ, 14 Փետրուարի 1906:

Ժասպառուել էր, եւ այդուհանդերձ կարողացել մինչ այդ ետ մղելով թուրքական 9 յարձակում, ամէն անգամ ետ մղելով «աւազակ բեգերի ու աղալարների առաջնորդութեամբ եկած այդ խուժանին»³²:

Մշակի 1906 Մարտի 9ի համարում Մեսրոպ քահանայի կողմից փաստառատ տեղեկութիւններ են բերում Չարդախլուի վրայ թուրքական վերջին՝ 1906 Փետրուարի 18ի յարձակման մասին, որի ժամանակ թշնամին Ջազամի կողմից բազմաթիւ ձիատրներով մօտենում է գիւղին եւ հասնում գիւղից 2 վերստի վրայ գտնուող «Սանդար» կոչուած տեղը, որը

մի կոնաձէ բլուր է, սեպացած, երկու անդնդախոր ձորերի միջեւ: Այդ Սանդարը իշխում է ամբողջ շրջակայքի վրայ, իսկ նրանից դէպի գիւղը բաց դաշտ է: Ամուր դիրքեր գրաւելով այդտեղ՝ բազմաթիւ թշնամին, կիսաշրջանաձէ պատեց հիւսիս եւ արեւմտեան կողմից: Մինչ թշնամին իր դիրքերն էր ամրացնում, մեր ...երիտասարդները հասան եւ սկսեց...կատաղի կռիւ, որ գերազանցում էր մինչ այդ եղածներին: Թշնամին ոչ միայն բազմաթիւ էր, այլեւ լաւ զինուած... Անձնապաշտպանութիւնը տկարին էլ ուժ է տալիս: Թուրքերը մի քանի անգամ «Եա Ալի» գողալով ուզեցին գրոհ տալ մերոնց վրայ, բայց մեր քաջերի յաջողակ կրակից՝ մի քանի զոհեր եւս տալով, յետ նահանջեցին: Դրութիւնը կրիտիքական էր, մեր դիրքերը շատ անյաջող էին թշնամուն դիմադրելու համար: Այդ ժամանակ հինգ կտրիճներ վճռեցին, ինչ էլ լինի, թշնամու թիկունքն անցնելով դիրքից դուրս քշել: Սա այնպիսի յանդուգն ձեռնարկութիւն էր, որ մի փոքրիկ անյաջողութեան ոչ միայն կարող էին ամէնքը զոհ գնալ, այլ եւ գերի ընկնելու վտանգ կար: Տեղացող գնդակների միջից անցնելով, փորսող տալով, հասան մերձակայ ձորը եւ օձապտոյտ ճանապարհներով, քարափների ծերպերով անցան բլրի միւս կողմը: Հենց լուեց «յառաջ» ազդանշանը, երկու կողմից գրոհ տուին մեր քաջերը, ուշք չդնելով տեղացող գնդակների տարափին: Թշնամին իրան երկու՝ թէւ փոքրաթիւ, կրակի մէջ զգալով, փախուստ տուեց, ասար տալով 6 ձի եւ շատ ճարակութեամբ քաշ տալով կռուի դաշտից շատ դիակներ: Մենք զոհ տուինք մի քաջ երիտասարդ եւ երկու վիրատու: Թշնամին մի քանի յուսահատական ճիգեր արեց նորից առաջ գնալու, բայց յաջողութիւն չունեցաւ եւ ուղիղ ժամը 5ին վերջնական հալածուեց մեր սահմաններից:

Արդէն մութը վրայ էր հասել, որ մեր քաջերը երգով դարձան: Սակայն յաղթութեան ուրախութիւնը տխրութեամբ համակեց մեր սիրտը տուած զոհի համար: Այսպիսով, մեր դրացի թուրքերի՝ «Չարդախլուն այս անգամ անպատճառ կ'առնենք» պարծենկոտութիւնը նորից ի դերեւ ելաւ: Նրանք հեռաւոր տեղերից օգնական ուժեր խնդրելով կամեցան իրանց սար երթալու ճանապարհը սրով հարթել: Այս կռոյի մասնակցում էին VI եւ V մասի բոլոր թուրքերը, բացի հեռու տեղերից՝ Բաղմանլարից, Ղարաբաղի եւ Ղազախի կողմերից, Եւլախից, նոյնիսկ Բագուի շրջանից եկածները, որոնք ունէին ամենաընտիր զէնքեր³³:

1906 Մարտի կէսերին միջամտում է ցարական դրագունների ջոկատը եւ իրադրութիւնը խաղաղացնելու համար Մարտի 11ին մօտենում է Չար-

³² «Վերջին տեղեկութիւններ», *Յառաջ*, 7 Մարտի 1906:

³³ Գ. Քահ. Մ., «Վերջին տեղեկութիւններ», *Մշակ*, 9 Մարտի 1906:

դախլուի մատոյցներին: Մի խումբ կազակներ 2 թնդանօթով մօտենալով գիւղին, պահանջում են զենքերը յանձնել՝ թուով 50-60 հատ, ինչպէս նաեւ «Մոսիկ»ներ եւ «Մաուզեր»ներ՝ տալով 2 ժամ: Եւ ինչպէս գրում է *Արշալոյս* թերթը, «քանի որ այդ բարիքը գիւղացու արտերում չի բանում, իսկ բարեխնամ տէրութիւնը չի բարեհաճել տալու, ուստի մինչեւ 2 ժամը չարդախլուեցիք չկարողացան եղած բաները յանձնել եւ գիւղը ենթարկուեց ոմբակոծութեան: Ուրիշ պատճառ չտեսնելով, չարդախլուեցիք կարծում են, որ իրանց մեղքը կայանում է նրանում, որ պաշտպանուել են 8-9 անգամ թուրք խուժանի յարձակումներից եւ թոյլ չեն տուել, որ իրանց գիւղն էլ Բադի եւ Ղազախի նման կործանուի»³⁴: Պարզ էր նաեւ, որ չարդախլուեցիները պէտք է ձգտէին իրենց համար կենսական զենքի եղած պաշարները թուրքական յարձակումներից պաշտպանուելու համար ուղղակի թաքցնել, դրա հիմքում ընկած էր ցարական իշխանութիւնների սադրիչ-հրահրիչ եւ երկդիմի քաղաքականութիւնը, որով երկրամասը կառավարում էր՝ խրախուսելով գժտութիւն եւ բախումներ հայերի եւ ադրբեջանցիների միջեւ, շատ դէպքերում տուրք տալով տեղական թուրք-թաթարական բէկերի եւ սասիրական նկրտումներին, որից պաշտպանուելու համար հայ բնակչութիւնը այլընտրանք չունէր եւ զենքը թաքցնելը հենց դրանով էր պայմանաւորուած, քանզի նաեւ ցարական կառավարիչները ամենեւին էլ չէին երաշխաւորում հայերի գոյքի ապահովութիւնն ու կեանքի անվտանգութիւնը: Այդուհանդերձ, ինչպէս տեղեկացնում է *Մշակը*, գնդապետ Իսաեւիչը որոշ ժամանակ անց տեղեկացնում է Կովկասի փոխարքային, որ Չարդախլու գիւղում գտել են 7 թնդանօթ եւ 200 հրացան, գերութիւնից ազատելով մի թուրքի³⁵:

Իրավիճակը կտրուկ փոփոխութեան չենթարկուեց նաեւ 1906 Ապրիլի կէսերին: Թուրքերի եւ հայերի յարաբերութիւնները կրկին լարուեցին եւ սպառնալից բնոյթ ստացան Գանձակի նահանգի բազմաթիւ հայկական գիւղերում, որի ընթացքում «*Չարդախլուն ուսմբակոծում է*» վերնագրով առաջնորդողում *Արշալոյսը* նկարագրում էր այն գործողութիւնները, որը զօրքը ծաւալել էր Չարդախլուի դէմ, որոնք շարունակուեցին դեռ երկար³⁶:

Եւ այսպէս, Չարդախլու գիւղի մարտակոորով եւ աննկուն հայերի գլխատրութեամբ թշնամին դուրս քշուեց Չարդախլուի մատոյցներից: Աւելին, Չարդախլուն սատարեց հարեւան, մերձակայ հայկական գիւղերին. նա առանց յապաղելու նոյնիսկ օգնութեան հասաւ հեռաւոր Բարսում գիւղի բնակիչներին: Անուրանալի է Չարդախլուից Բարսում հասած Մարտիրոս

³⁴ Ա. Սահակեան, «Մեր վիճակը», *Արշալոյս*, 15 Մարտի 1906:

³⁵ Ուխտատուր, «Պատասխան Գետաբէկի գործարանի կառավարիչ Ադոլֆ Էրնին», *Մշակ*, 17 Մարտի 1906. նաեւ՝ Ա., «Ուր է արդարութիւնը», *Արշալոյս*, 18 Մարտի 1906:

³⁶ Ա. Սահակեան, «Մեր վիճակը», *Արշալոյս*, 15 Մարտի 1906:

վարժապետի գլխավորած հայդուկների խմբի ներդրումը. նա թուրքական հրոսակախմբերին դեմ առ դեմ է դուրս գալիս հենց այն պահին, երբ վերջիններս գիւղից դուրս էին տանում կովերի նախիրը եւ կանխում այն՝ ետ վերադարձնելով այն օրինական տէրերին: Այդ մասին շատ Ա-Դօն վկայում է 1905ի վերջին թուրքերի կողմից ձեռնարկուած յարձակման մասին. «...պաշարեցին Բարսումը, որը շնորհիւ իր ամուր դիրքերի ուժեղ դիմադրութիւն ցոյց տուեց եւ յետքէ յարձակումը: Սակայն թուրքերը չխրապուած այդ բանից, Դեկտեմբերի 5ին յարձակուեցին Բարսումի վրայ եւ հանդիպեցին նախիրը, որի ժամանակ Չարախլուից եկած զինուած մի խումբ երիտասարդներ, օգնութեան հասնելով, ոչ միայն նախիրը յետ խլեցին, այլ եւ հետեւելով թուրքերին մինչեւ Մալաքլու գիւղը, կրակի կապեցին նրանց»³⁷: Վերջապէս, Դեկտեմբերի 5ին չարախլուեցիները միացեալ ուժերով թուրքերին դուրս են շարտում Բարսում գիւղից³⁸, յետոյ հետապնդում փախչող թուրքերին, ներխուժում մերձակայքում գտնուող թուրքական գիւղը եւ վերցնում զգալի քանակութեամբ ռազմաւար³⁹:

Հակառակորդը 1905 Նոյեմբերի 30ի եւ 1906 յարձակումները տանուլ է տալիս եւ անփառունակ պարտութիւն կրելով, նահանջում՝ իր հրոսակների դիակները թողնելով մարտադաշտում⁴⁰:

Չարախլուեցիների մարտական տարեգրութեան մէջ ուշագրաւ է նաեւ նրանց գործուն մասնակցութիւնը հայաբնակ *իրապէս* հեռաւոր այլ գաւառների, շրջանների պաշտպանութեանը եւ հերոսական կոչւումներին: Արշակ Վիրաբեանի վկայութեամբ, ռուսական առաջին յեղափոխութեան տարիներին գիւղի բնակիչ Ղազար Մանասեանի գլխավորութեամբ չարախլուեցի 26 կամաւորներ մեկնում են Արեւմտեան Հայաստան եւ մասնակցում Սասունի 1904ին սկսուած հերոսամարտին: Այդ հերոսական զօրաջոկատի անդամներից 6ը տուն չեն վերադառնում, իսկ խմբի ղեկավարը սպանում է Շամխորի մօտ դարանակալած թշնամու գնդակից⁴¹: Սպանութիւնը անհետեւանք չի անցնում եւ վախ է ներշնչում Շամխորի թուրքերին, որ հայերը ձեռքները ծալած չեն նստի եւ հարկ եղած դէպքում հակահարուած կը տան ...:

Չարախլուեցիները մարտական մեծ մկրտութիւն ստացան առաջին աշխարհամարտում: Նրացից Արամ Մարգարեանը, Յ. Ստեփանեանը, Հ. Մարտիրոսեանը, Հ. Խաչատրեանը դարձան Գէորգիեւեան Ոսկէ Խաչի ասպետներ, իսկ ոմանք էլ իրենց կենսագրութեան էջերը գրեցին զօրա-

³⁷ Ա-Դօ, *Հայ-թուրքական*, էջ 341:

³⁸ Նոյն:

³⁹ Տէրեան, էջ 311-12:

⁴⁰ Յովհաննէս Ա. Բաղդամեան, «Չարախլուի ֆենոմէնը», *Հայկական բանակ*, 1997:4, էջ 15, 77-80:

⁴¹ Նոյն, էջ 79:

վար Անդրանիկի զորաջոկատում⁴²: Հետաքրքիր է նշել նաեւ, որ Անդրանիկի զինուոր Արամ Մարգարեանը մինչեւ կամաւոր զինուորագրուելը, որդեգրուել է իր հօրեղբօր՝ ցարական բանակի հանրայայտ դեր-զօրավար, ռազմական բժիշկ Զեան Բէկ Մարգարեանի (1844-1931) կողմից, որը ճակատագրի բերումով փրկել է Ռուսաստանի կայսրուհու կեանքը եւ որի դիմաց ցարը Չարդախլու հայկական գիւղին է վերադարձնում թուրքերի կողմից խլուած հազար հեկտարի չափ հող՝ Թաքաղաչից սկսած մինչեւ Տիւ աղբիւր եւ Ծիրանի այգի: Իսկ նրա որդեգիրը՝ Արամը աչքի է ընկել որպէս դիպուկ հրաձիգ՝ գիւղի ինքնապաշտպանութեան ժամանակ: Նա դարձել է ծիաքարշի գնդացրորդ եւ Անդրանիկի ջոկատի կազմում մասնակցել մի շարք կարեւոր ճակատամարտերի, մասնակցել Սարդարապատի ճակատամարտին, պարգեատրուել շքաշանններով եւ Անդրանիկից ստացել անուանական ատրճանակ⁴³:

Յիշարժան է նաեւ մէկ այլ հայրենասէր եւ քաջ զինուորի՝ Գէորգիւեան Խաչի ասպետ Աբգար Սարգսի Մանուշարեանի կերպարը: Նա աւարտել է Սեաստոպոլի օդազնացութեան դպրոցը եւ առաջին ինքնուրոյն թռիչքը կատարել դեռեւս 1913ին, երբ դեռ հայկական օդազնացութեան մասին խօսք անգամ չկար: Մանուշարեանը որպէս օդաչու մասնակցում է առաջին աշխարհամարտին, եռանդուն ներգրաւում Կարսի մօտ մղուած մարտերին, եւ թուրքական ու գերմանական զօրքերի դէմ մղուած օդային մարտերում գործած սխրանքների համար 1915ին ստանում է Գէորգիւեան զօրախաղերի լրիւ ասպետի կոչում, արժանանում ցարական բանակի սպայի աստիճանի՝ դառնալով ենթասպայ: Նա լինելով հայ ազգային-ազատագրական շարժման յայտնի գործիչ Գրիգորի Մանուշարեանի թողը՝ շարունակեց ըստ արժանւոյն նախնու փառաւոր աւանդոյթները⁴⁴:

Դիտարժան է չարդախլուեցի ենթասպայ, ապագայ *մարաշախլար* Յովհաննէս Բաղրամեանի կերպարը, որը դեր-ձօրավար Թովմաս Նազարբէկեանի գլխաւորութեամբ գործող Հայկական Կորպուսի յատուկ կամաւորական զօրաբաժնի շարքերում որպէս հեծեալ դասակի հրամանատար մասնակցել է թուրքական զօրքերի դէմ մղուած մարտերին Սարդարապատում: Այնուհետեւ Բաղրամեանը շատերի նման ծառայութեան է անցել նոր ծնուած ՀՀ զինուած ուժերում որպէս հեծեալ գնդի հեծելավաշտի հրամանատար՝ իր մասնակցութիւնն ունենալով 1920 Սեպտեմբերին թուրքերի կողմից սանձազերծած պատերազմին:

⁴² Չարդախլու. *հայկական գիւղի պատմութիւն*, էջ 9:

⁴³ Նոյն, էջ 38, 64-65:

⁴⁴ Աբգար Մանուշարեանը զոհուել է 1916 Յունիսի 16ին՝ Էրզրումի ճակատում, իսկ մարմինը Կարսից տեղափոխուել է եւ հողին յանձնուել հայրենի ծննդավայր Չարդախլուում (նոյն, էջ 63, 567):

1918 Մարտին Շուշիի չարաղետ դեպքերի ժամանակ թուրք-թաթարական հրոսակների թիրախ դարձան նաեւ Գանձակի գաւառի գիւղերը եւ մասնաւորապէս Չարդախլուն, որտեղ ՀՀն (կապուած նաեւ Գետաբէկի պղնձահանքերի հետ) ունէր պահակազօր:

Չի կարելի չնշել նաեւ Չարդախլուի հերոսական տարեգրութեան եւս մի կարեւոր դրուագի մասին Հայաստանի առաջին Հանրապետութեան օրերին: Ըստ Չարդախլուի մասին թողած մի կարեւոր յուշագրութեան, 1918 Յունուարի 10ին յայտնի յեղափոխական Ստեփան Շահումեանը Բաքուից ճանապարհուելիս է եղել դէպի Թիֆլիս: Ճանապարհին՝ Գանձակի մօտ Ջազամի անտառից մուսաւաթական զինուած աւազակախումբը կտրում է ճանապարհը, որի ընթացքում չարդախլուեցիների կազմած զինուած ջոկատը կարողանում է ոչնչացնել հակառակորդի դիրքերը՝ հրամանատար Մուշեղ Անախաթունեանի գլխաւորութեամբ: Այնուհետեւ այդ ամէնի քաջատեղեակ Ասքանազ Մռաւեանը չարդախլուեցիներ Պետի Բաբաջանեանի, բժիշկ Մելումեանի աջակցութեամբ կազմակերպում են Շահումեանի տեղափոխութիւնը Չարդախլու, որտեղ նա մնում է 2 օր, որից յետոյ քեօխվա Ս. Դանիէլեանը, Արշակ Բաիրեանը եւ Ալեքսան Վիրաբեանը նրանց տանում են Էրմաշտու՝ Սերգօ Դանիէլեանի ծանօթներից Դովլաթ խան օղլի Ղարի տուն. այս օգնութեամբ Շահումեանը հասնում է Թիֆլիս⁴⁵:

Այդ օրերին եւս Չարդախլուն գտնուել է ծաւալուող հայ ժողովրդի համար ճակատագրական իրադարձութիւնների կիզակէտում: Այդ մասին է վկայում առաջին ռազմաոստիկանական հետեւակային գնդի հրամանատար գլխապետ Մնացականեանի 1919 Փետրուարի 5ի զեկուցագիրը (N 226)՝ ուղղուած հայկական զօրաբաժնի հրամանատարին, որում նշել էր Ելիզաւետպոլ-Գանձակ գաւառի Չարդախլու գիւղի գիւղացիների դժգոհութեան մասին՝ թաթարների կողմից անցկացուող ուժեղացուած բռնի զօրահաւաքի խնդրով: Նրանք նկատել էին որ դրա նպատակը Հայկական Լեռնաշխարհը հայերից մաքրելն էր՝ Գետաշէնից մինչեւ Բադաքքենդ⁴⁶: Աւելին, ինչպէս նշում է Բաքում ՀՀ դիւանագիտական ներկայացուցիչ Մարտիրոս Յարութիւնեանը կառավարութեանն ուղղուած 1920 Սեպտեմբերի 20ի գաղտնի հեռագրում, Ադրբեջանի իշխանութիւնները իրենց հանրապետութեան անբաժան մաս համարելով Ջանգեզուրը, Ղարաբաղը, Շարուր-Նախիջեւանը, Սուրմալուն եւ այլ հայկական տարածքներ, զօրակոչից չէին ազատում նաեւ Ադրբեջանի տարբեր վայրերում հանգրուանած թուրքահայերին, ինչպէս օրինակ, Գանձակի շրջանի Չարդախլուն ժամանակաւոր հաստատուած թուրքահայ գաղթականներին⁴⁷:

⁴⁵ Չարդախլու. հայկական գիւղի պատմութիւն, էջ 251, 517:

⁴⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 151, թ. 90 հալ.:

⁴⁷ Նոյն:

Հանրայայտ գիտի վիճակը չի փոխում եւ չի թեթեւանում Կարմիր Բանակի առաջխաղացմամբ եւ խորհրդային կարգերի հաստատմամբ, որը պայմանատրուած էր գիտից ոչ-հեռու գտնուող, Փառիսոսի ամրոցի աւերակների մօտ տեղաբաշխուած նշանաւոր Գետաբէկի պղնձաձուլական գործարանի նկատմամբ ունեցած հետաքրքրութեամբ: Դա ակնյայտօրէն երեւում է Գրիգորի Կ. Օրջոնիկիձէի (Սերգօ Օրջոնիկիձէ) ուղիղ հեռագրագծով խօսակցութեան 1920 Յունիսի 11ի գրառումից 11րդ Կարմիր Բանակի Ռազմայեղափոխական Խորհրդի անդամ Վեսնիկի հետ: Դրանում ուղղակի նշում է, որ ինչպէս Ղարաբաղում, այնպէս էլ այլ հայաբնակ վայրերում այսպէս կոչուած հակայեղափոխական ապստամբութեան ճնշման անհրաժեշտութեան մասին, որի առումով իր բացայայտ պատրաստակամութիւնն է արտայայտում Հուսէյնովը՝ խոստանալով տրամադրել 200ից աւելի հեծեալներ, որին Օրջոնիկիձէն աւելացրել էր, որ ինքը ոչ մի յոյս չի կապում հեռացող Բաղիրովի հետ: Միաժամանակ, վերոնշեալ խօսակցութեան վերջանումից ակնյայտ է դառնում, որ Օրջոնիկիձէի համար գետաբէկեան խնդրի հանգուցալուծման համար առաւել մեծ հետաքրքրութիւն էր ներկայացնում Ջեգամ (Ջակամ) կայարանից ոչ հեռու գտնուող Չարդախլու գիտի զինաթափման եւ Գետաբէկի պղնձաձուլարանի զաւթման եւ վերագործարկման հարցը, որն այդ պահին իբր թէ գտնում էր դաշնակցականների տնօրինութեան ներքոյ: Սակայն ինչպէս փաստում են արխիւային վաւերագրերը⁴⁸, իրադարձութիւնները հեշտ ընթացք չեն ստանում եւ գիտի շուրջը ծաւալում են դրամատիկ իրադարձութիւններ, որում չարդախլուեցիները հլու-հնազանդ դիտորդի դերում չէին: Գիտի բնակիչները բոլորովին էլ չէին պատրաստում այդքան հեշտ ու հանգիստ հպատակուել ռազմաքաղաքական իրադարձութիւնների այդ անտրամաբանական ընթացքին եւ փորձում են դիմադրել այդ ամէնին, բայց ուժերի չափազանց անհաւասար լինելու պատճառով ի վերջոյ նահանջում են:

Իսկ գիտը հպատակեցնելու խորհրդա-ադրբեջանական փորձերը շարունակական են դառնում: Այսպէս, 1920 Յունիսի 11ին Բաքուից 11րդ Կարմիր Բանակի հրամանատարին հասցեագրուած հեռագրում Օրջոնիկիձէն շեշտելով Ղազախի շրջանում գտնուող բուլշեւիկամէտ ապստամբներին օգնութիւն ցուցաբերելու անհրաժեշտութեան մասին, դրա հետ մէկտեղ ընդգծում էր, որ դաշնակցականները Գետաբէկի շրջանում ոչնչացնում են մուսուլմաններին եւ հայերին, եւ որ Շամխորի գաւառի Ջեգամ եւ Գետաբէկ կայարանների միջեւ ընկած միջակայքում գտնուող *հակայեղափոխական Չարդախլու հայկական գիւղն անհրաժեշտ է անյապաղ զինաթափել*, որի համար հարկաւոր է Ղազախի շրջանից ուղարկել 200 կարմիրբանա-

⁴⁸ *Нагорный Карабах в 1918-1923 гг.: Сборник документов и материалов* (Լեռնային Ղարաբաղը 1918-23թթ. փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու), խմբ. Վ. Ա. Միքայէլեան, Երեւան, ՀՀ ԳԱ հրատ., 1992, էջ 499:

կային եւ նոյնքան հայ՝ ուղարկելով նրանց Ձեզամ կայարան եւ դնելով գաւառային յեղկոմի տեղամասային կոմիսար Ջիատովի տրամադրութեան տակ⁴⁹, սակայն չարդախլուեցիները ոչ միայն չեն ընկճում, այլեւ շարունակում են դիմադրել եւ նոյնիսկ օգնել հարեւան գիւղերին:

Չարդախլուի հերոսապատման տարեգրութիւնից ուշագրաւ է եւս մի դիտարժան փաստէջ. դեռեւս հայ-թուրքական ընդհարումների ժամանակ (1905-07) թուրք-թաթարները Չարդախլուից արեւմուտք, 8 կմ հեռավորութեան վրայ գտնուող Աթաբէկ գիւղի մալոկաններին դուրս են քշում իրենց բնակատեղուց եւ բնակում այդ գիւղում, որն էլ մինչ այդ հայկական բնակավայր է եղել, սակայն դեռեւս 1890ին արդէն հայաթափուած էր⁵⁰: Սակայն անսպասելի իրադարձութիւններն այլ ընթացք են ստանում. արդէն խորհրդային կարգերի ժամանակ, չերկնչելով հնարաւոր բռնաճնշման քայլից, 1924 Ապրիլին Չարդախլուի երիտասարդութիւնը աւագների գլխավորութեամբ Աթաբէկ գիւղից վճռաբար դուրս է շարտում թուրքերին, իսկ չարդախլուեցի Յարութիւն Նահապետի Վիրաբեանը (1896-1975)⁵¹ 40 ընտանիք գաղթականների ապահովում է բնակարաններով եւ նրանց համար ստեղծում ապահով պայմաններ: Նա ստեղծել էր մեծ գերդաստան եւ ի վերջոյ դարձել այդ գիւղի երկարամեայ կոլտնտեսութեան նախագահը՝ վայելելով մեծ հեղինակութիւն անգամ թուրքերի մօտ. միաժամանակ, գիւղը հայացնելու եւ վերաբնակեցնելու նպատակով Վիրաբեանը կազմակերպում է աւելի քան 50 ընտանիքների տեղափոխութիւնը Չարդախլուից Աթաբէկ, ուր հայութիւնը վերստին արմատներ է գցում, ստեղծագործում եւ արարում մինչեւ իր բռնի տեղահանումը հայրենի բնակավայրից⁵², որով հերոսական հայկական այս գիւղերի ազգասպանութեան ջարդարարական քաղաքականութիւնն աւարտում է:

1987ի վերջից սկսած հայկական Չարդախլու գիւղում ծաւալուած իրադարձութիւնները սակայն ունենում են հեռահար ծանր հետեւանքներ⁵³:

Հայաստանի Հանրապետութեան ողջ հասարակական-քաղաքական, տնտեսական եւ ընկերային կեանքի վրայ այդ չարաղէտ եղեռնածին իրա-

⁴⁹ *Нагорный Карабах в 1918-1923 гг.*, էջ 531:

⁵⁰ Կարապետեան, էջ 456:

⁵¹ Նա դեռեւս 1915ին զօրակոչուել էր ցարական կովկասեան բանակ եւ իր ցանկութեամբ ուղարկուել ռազմաճակատի առաջնագիծ, ծառայելով Սարիղամիշում: Զօրացրուելուց յետոյ վերադարձել էր գիւղ, համախմբել գիւղի երիտասարդութեանը եւ կազմակերպել գիւղի երիտասարդութեան զինեալ պայքարը թուրքերի ոստնճութիւնների դէմ, Աթաբէկ գիւղից դուրս քշելով թուրքերին (Արշակ Վիրաբեան, *Գիրք Դարերի Խորքից*, Երեւան, 1998, էջ 128. նաեւ՝ *Չարդախլու*, էջ 175):

⁵² Վիրաբեան, էջ 128:

⁵³ Levon Chorbajian, Patrick Donabedian, Claude Mutafian, *The Caucasian Knot. The History of Nagorno-Karabagh (Politics in Contemporary Asia)*, London-New Jersey, Zed books, 1994, էջ 148:

դարձությունները կապում Ադրբեջանի իշխանությունների կողմից իրագործված հայահալած-ջարդարարական քաղաքականության հետ բռնի հայաթափելու Գանձակի եւ Շամխորի, Խանլարի եւ այլ հայաբնակ շրջանները բնիկ հայ բնակչությանից, յանգեցրին Յեղասպանության եւ ծանր հետեւանքներ ունեցան հայկական Ուտիք-Գադմանքի ճակատագրում, որոնց հեռահար հետեւանքները դեռ բաւականին երկար ժամանակ իրենց զգացնել կը տան: Բրիտանական յայտնի լրագրող, Կովկասի գծով մասնագետ Թոմաս Դէ Վաալի կարծիքով, այդ ամենի սկիզբը դրուեց 1987 Հոկտեմբերին, երբ տեղի ադրբեջանական իշխանությունների եւ Ադրբեջանի հիւսիսում գտնուող հոջակաւոր Չարդախլու գիւղի հայ բնակիչների միջեւ տեղի ունեցաւ բախում, ի պատասխան Ադրբեջանի կողմից գիւղի կոլտնտեսութեան նախագահ ադրբեջանցու նշանակման կապակցութեամբ Չարդախլուի բնակիչների կողմից ցոյց տուած բողոք-դիմադրութեան եւ Մոսկուա դիմելու⁵⁴: Չարդախլուի կոլտնտեսութեան նախագահ ադրբեջանցի նշանակելու նախաձեռնողը եւ դրան հակառակուած գիւղի բնակիչների ջարդի կազմակերպիչը անձամբ Շամխորի շրջանի առաջին քարտուղար Մ. Ասադովն էր⁵⁵, ինչը առաջ բերեց ազգամիջեան լարուածութիւն եւ հրահրեց յետագայ բռնութիւնների ալիքը հայկական բնակչութեան նկատմամբ, եւ արդիւնքում՝ 1987ի վերջում ըստ էութեան Չարդախլուում բռնկուած ադրբեջանա-հայկական բախումը ազդակ դարձաւ 1988ին ապօրինաբար ծնուած եւ արդէն Նոյեմբեր ամսին իր գագաթնակէտին հասած Ադրբեջանի հայաբնակ վայրերից հայութեան զանգուածային բռնագաղթի համար: Ադրբեջանի իշխանությունների կողմից վտարման ենթարկուած եւ իրենց բնիկ վայրերից հայ ազգաբնակչութեան բռնագաղթը ազգամիջեան յարաբերութիւնների ոլորտի գլխատոր խնդիրը դարձաւ: Ինչպէս դիպուկ նկատել է Ալեքսէյ Զվերէլը, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հիւսիս-արեւմուտքում գտնուող Չարդախլու գիւղի հայերի 1987ի վերջին ադրբեջական իշխանությունների կողմից իրագոր-

⁵⁴ Thomas De Waal, *Black Garden, Armenia and Azerbaijan through Peace and War*, New York and London, New York University Press, 2003, էջ 18:

⁵⁵ Л. К. Рычкова, Межнациональные отношения в СССР в 1985-1991 гг., (исторический и учебно-методический аспект) (Լ. Կ. Ռիչկովա, Ազգամիջյան յարաբերութիւնները ԽՍՀՄում 1985-1991 թթ., (պատմական եւ ուսումնամեթոդական տեսանկիւն), Եկատերինբուրգ, «Ուրալի Պետական Մանկավարժական Համալսարան, հասարակական գիտութիւնների ինստիտուտ», 2018, էջ 68 (<http://elar.uspu.ru/bitstream/usp/9672/2/Rychkova.pdf> , ներբեռնման օրը՝ 06.06.2020). նաեւ՝ L. K. Richkova, *Interethnic relations in the USSR 1985-1991* (historical-educational point of view), Yekaterinburg, "Ural State Pedagogical University, Institute of Social Sciences", 2018:

ծուած բռնութիւնները եւ ջարդը ատելի սարսափելի 1988ի իրադարձութիւնների նախերգանքը հանդիսացաւ⁵⁶:

Դա է հաստատում նաեւ Կիմ Ղահրամանեանը. «1987 թուականից սկսած՝ բացայայտ է դարձել հայերին բռնի տեղահանելու՝ Ադրբեջանի իշխանութիւնների քաղաքականութիւնը: Առաջին փորձը նրանք կատարել են Հիւսիսային Արցախի Չարդախլու գիւղի բնակիչների նկատմամբ»⁵⁷:

Ծանրագոյն այդ հիմնահարցը պատճառահետեւանքային խոր կապերի մէջ յայտնուեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի՝ Արցախի Հանրապետութեան համալիր բնոյթ կրող հիմնահարցի հետ: Թէ ինչո՞ւ Ադրբեջանական ԽՍՀի, ներկայիս Ադրբեջանի Հանրապետութեան հայաբնակ վայրերից բնիկ հայ ազգաբնակչութիւնը «յանկարծակի» արտագաղթեց Հայաստանի Հանրապետութիւն՝ հարկաւոր է դեռ ամենայն անաչառութեամբ եւ մանրամասնութեամբ բացայայտել: Իրագործուեց ազգասպանութիւն՝ հայ ազգաբնակչութեան բռնի տեղահանումը հարազատ բնակավայրերից, որը դատապարտում է միջազգային բոլոր օրէնքներով, ՄԱԿի 1948ի հիմնարար ուխտով⁵⁸:

Այս իրողութիւններն իրենց փտած գաղափարական եւ աղաւաղուած գործնական հիմնաւորումը գտան նոյնիսկ ՀՀ մտաւորականութեան մի շարք ներկայացուցիչների անպատասխանատու, քաղաքական առումով միանգամայն անհեռանկարային եւ անհաշուենկատ, հակապատմագիտական հրապարակումներում, ելոյթներում մամուլում: «Յայրնի» գրող Վարդգէս Պետրոսեանը *Խորհրդային Հայաստան* թերթի 1989 Օգոստոսի 17ի համարում գետեղեց մի չարաբաստիկ յօդուած «Վերաբնակի՛չ... Փախստական՛ն..., Գաղթական՛ն..., Հայրենադա՛րձ» վերնագրով, որը բառիս բուն իմաստով պատմական իրողութիւններն ու քաղաքական երեւոյթները նենգափոխելու շատ կոպիտ եւ պատիւ չբերող փորձ է: Առաւել եւս այն խիստ հակագիտական բնոյթ եւ ուղղութիւն ունի, որը խախտում է դասական ասանդոյթները եւ նենգափոխում արդէն վաղուց հայագիտութեան կողմից քաղաքացիութիւն ստացած տեսակէտերը եւ հայեցակարգերը: Պատմագիտական հասկացութիւնների քաղաքական խեղա-

⁵⁶ А. Зверев, “Этнические конфликты на Кавказе, 1988-1994 г.” (Ա. Զվերեւ, «էթնիկական բախումները Կովկասում. 1988-1994». Վիճելի տարածքները Կովկասում), Մոսկուա, «Ողջ աշխարհը», 1996

(URL: <http://poli.vub.ac.be/publi/ContBorders/rus/ch0104.htm>, :<http://poli.vub.ac.be/publi/ContBorders/rus/ch0102.htm>:https://www.vub.be/sites/vub/files/nieuws/users/bcoppet/139glava_i.pdf), ներբեռնման օրը՝ 15 Յունիս 2020. նաեւ՝ А. Zverev, *Ethnic clashes in the Caucasus. 1988-1994. Disputed territories in the Caucasus*, Moscow, the whole world, 1996:

⁵⁷ Կ. Դ. Ղահրամանեան, «Հիւսիսային Արցախ, (պատմական քննական վերլուծութիւն)», դոկտորական աւարտաճառ, Երեւան, 2000, էջ 8:

⁵⁸ Հայոց պալմութեան հիմնահարցեր, Երեւան, ԵՊՀ հրատ., 2000, էջ 442-43:

թիւրման միջոցով հեղինակն այդ յօդուածում փորձել է հաւասարութեան նշան դնել «գաղթական» եւ «հայրենադարձ» հիմնարար հասկացութիւնների միջեւ եւ դեռ հանդիսաւոր սնապարծութեամբ նշում, որ հարազատ բնակավայրերից հայ ազգաբնակչութեան տեղաշարժը «պիտի լինէր նաեւ՝ անկախ Լեռնային Ղարաբաղի դէպքերից: Նրանք պիտի գային-լցուէին Հայաստան» եւ այդ երեւոյթը որակում է որպէս «հայրենադարձութիւն»⁵⁹: Պետրոսեանը անհեռատեսօրէն անտեսելով այն կարեւոր պատմաքաղաքական ծանրակշիռ հանգամանքը, որ, ինչպէս ինքն է ընդգծում, «նրանց պապերը-նախապապերն են ապրել այդ վայրերում, ապրել են անյիշելի ժամանակներից եւ նրանք շար աւելի էին բնիկներ, քան քարտէզի այսօրուայ տէրերը», որն «իրենց ժողովրդի պատմական հայրենիքն էր քարտէզի այսօրուայ տէրերի աշխարհ գալուց շար հարիւրամեակներ առաջ», հայ բռնագաղթեալներին միանգամայն անհիմն ու անտեղի համարում է հայրենադարձներ⁶⁰: Յօդուածի հեղինակը դրանով վտանգաւոր քաղաքական ապակողմնորոշման վիճակի մէջ գցեց ու այսօր էլ գցում է հազարաւոր հայ եւ ոչ-հայ մարդկանց (ինչի դրսեւորումները կամ վերապրուկները առայսօր կան), բռնագաղթը անարդարացիօրէն նենգափոխելով հայրենադարձութեան «հասկացութեամբ», եւ դեռ հիմնադուրկ սնապարծութեամբ նշում, որ ադրբեջանցիներն էլ տեսան, որ ազգաբնակչութիւնը ետ չի վերադառնում, որ «նոյնիսկ առասպելական այն գիւղը, որ երկրին երկու մարաջախտ էր տուել, արմատահան եղաւ-փախաւ այդ «եղբայրութիւնից»⁶¹: Դա նաեւ ծանր հարուած է հայ պատմագիտութեան կողմից վաղուց իվեր ձեւաւորած աւանդոյթներին եւ ընդունուած մեկնակէտային տեսակէտերին:

Սա ակնբախօրէն վկայում է Պետրոսեանի եւ այլ հեղինակների քաղաքական անհաշուենկատ, հեռուն չմիտուած մտածելակերպի մասին, բայց ոչ ամէնեւին քաղաքական ողջամտութեան, հեռատեսութեան եւ ազգամիջեան յարաբերութիւնների ողջ բարդոյթի ճշմարիտ ըմբռնման մասին, ինչին ցայսօր պատասխան գնահատական չի տրուել: Սա նաեւ վկայում է, որ հեղինակը ամենայն հաւանականութեամբ այդ արհեստական եւ կազմակերպուած, քաղաքականապէս նախօրօք նախապատրաստուած բռնագաղթերին տուրք տուողների դասին է պատկանում, որոնք յամառութեամբ ձգտել են եւ դեռեւս շարունակում են յամառօրէն ձգտել հետքերը ծածկել, քօղարկել Պատմական Հայաստանի, Հայոց Հայրենիքի «Արցախ» եւ «Ուրիք» աշխարհների (նահանգների) հարազատ բնակավայրե-

⁵⁹ Վարդգէս Պետրոսեան, «Վերաբնակի՛ջ... փախստակա՛ն... գաղթակա՛ն... հայրենադա՛րձ», *Խորհրդային Հայաստան*, Երեւան, 17 Օգոստոս 1989:

⁶⁰ Նոյն:

⁶¹ Նոյն:

րից⁶² բռնի տեղահանում ծագած հայության մասին ողջ ճշմարտությունը: Դրանք նաեւ այն կեղծ հայրենասերներն են պատեհապաշտների պատմումնով, ովքեր այսօր էլ խոչընդոտում են տարաբնույթ արտաքին-քաղաքական եւ ռազմական բնոյթի հեռահար միջոցառումների իրագործմանը, կազմակերպելով հայրենասիրական խաղիկներ, այդ նպատակի համար օգտագործելով ամենաբարձր ամբիոնները: Նրանց կարելի է դասել բոլորից բարձր ճշացողների այն շարքին, որոնք այսօր կեղծ ու անտեղի գթասրտություն եւ հայրենասիրություն են բեմադրում՝ է՛լ ավելի խճճելով եւ դժուարացնելով սեփական հայրենիքի առաջ կանգնած կարեւորագույն եւ առաջնահերթ հիմնախնդիրների հանգուցալուծումը, ռազմավարական համալիր բնոյթի ծրագրերի իրագործումը, յիշեցնելով ֆրանսիական մեծ յեղափոխության «*ճահճի*» մէջ նստածներին՝ բոլորից բարձր ու միանգամայն անտեղի բարձրածայնելով ազգային բարձր «արժէքների» եւ չտարած յաղթանակների մասին:

Այս ամէնի հետեւանքով բռնագաղթերի իրականացման դեռ սկզբնամասում հարազատ բնակավայրերը լքեցին ավելի քան 213 հազար հայեր կամ շուրջ 56 հազար ընտանիք⁶³, որոնց թիւը յետագայում զգալի չափով ավելացաւ՝ ընդունելով ահռելի չափեր⁶⁴: Նրանց որոշակի ֆինանսական, նիւթական եւ այլ կարգի օգնություն ցոյց տրուեց, ստեղծուեցին պայմաններ, եւ կարծես թէ մոռացութեան մատնուեց, որ *Չարդախլուում եւ հարիւրաւոր այլ հայկական բնակավայրերում նրանց նախնիներն ապրել են բազում հարիւրամեակներ, հազարամեակներ, ինչը շարունակում է առ այսօր՝ աղաւաղելով պատմաքաղաքական գործընթացների իրական բո-*

⁶² Բ. Ուլուբաբեան, *Արցախի պայմանություն, սկզբից մինչեւ մեր օրերը*, Երեւան, «Մ. Վարանդեան» հրատ., 1994:

⁶³ Հրանուշ Առաքելեան, Զաւէն Խառատեան, «Հայեացք փախստականության պրոբլէմին», *Խորհրդային Հայաստան*, 19 Սեպտեմբերի 1989:

Ղարաբաղեան շարժման մեկնարկին՝ երեք տարուայ ընթացքում Ադրբեջանից բռնագաղթեց 450,000 հայ: 1988ի Սումգայիթի ջարդերին յաջորդեցին հայաշատ Կիրովաբադից (Գանձակ), Շամխորից, Խանլարից, Դաշքեսանից, Շաքիից եւ հայաշատ այլ բնակավայրերից հայ բնակչութեան թալանը եւ բռնի արտաքսումը: Թողնելով իրենց հազարամեայ բնօրանը, մատուներն ու եկեղեցիները, նախնիների գերեզմանները՝ 250,000 հայեր տեղափոխուեցին Հայաստան կամ սփռուեցին աշխարհով մեկ: Բռնագաղթածների երկրորդ ալիքն սկսուեց 1990 Յունուարի Բաքուի սոսկալի հայասպանութիւնից յետոյ, երբ հարիւրաւոր հայեր սպանուեցին Ադրբեջանի մայրաքաղաքում, եւ եւ 200,000ը ստիպուած եղան թողնել իրենց տներն ու ունեցուածքը, բռնել գաղթի ճանապարհը (Արմէն Վարդանեան, «Ադրբեջանից բռնագաղթած հայերի հարցի լուծումը մտել է նոր փուլ, *Հայաստանի Հանրապետություն*, 25 Յուլիսի 2020

(<https://armenpress.am/arm/news/1023048.html> , դիտում՝ 23 Յուլիս 2021):

⁶⁴ Առաքելեան, Խառատեան. նաեւ՝ Հրաչիկ Սիմոնեան, «Ազգամիջեան լարուածութեան ակունքներում», *Խորհրդային Հայաստան*, 20 Սեպտեմբերի 1989:

վանդակությունը եւ դրանց զարգացման հնարաւորինս նպատակայարմար, ճիշտ եւ առաւել հեռանկարային տարբերակների ընտրութիւնը, առաւել եւս, որ ներկայումս ադրբեջանական պատմաքաղաքագիտութեան բազմաթիւ ներկայացուցիչներ ներկայումս փութաջանօրէն զբաղուած են Սինիք-Արցախի եւ Ուտիքի հին եւ նորագոյն պատմութեան, հայոց ազատամարտի ուտիք-արցախեան էջերի կոպիտ եւ անթաքոյց նենգափոխմամբ⁶⁵, ինչը զրկում է Հայաստանի Երրորդ Հանրապետութեանը՝ առաւելագոյնս օգտուելու ընձեռուած հնարաւորութիւններից՝ լիարժէքօրէն ապահովելու համար սեփական ազգային-պետական եւ պատմաքաղաքական շահերը՝ յօգուտ սեփական հայրենիքի, յետագայ սերունդների պատմաքաղաքական հեռանկարների ապահովման եւ աննախընթաց բարգաւաճման ռազմավարական ծրագրերի իրագործման:

ՅԵՏ ԳՐՈՒԹԵԱՆ

Հայկական Չարդախլուի ցեղասպանական ողիսականը ունեցաւ որոշակի աւարտ: 1988-89ին Չարդախլու (Խաչիսար) գիւղից բռնագաղթուեցին մեծ թոով հայեր, որոնց մօտ 60 տոկոսը հանգրուանեցին ՀՀ Տաւուշի մարզկենտրոնից 60 կմ հիւսիս-արեւմուտք գտնուող Քէօրփուլու նախկին ադրբեջանական գիւղում, որը Զօրական է վերանուանուել 2006ի Յուլիսի 4ին⁶⁶, եւ որը մինչեւ 1988 բնակեցուած է եղել ադրբեջանցիներով: Այդ մասին բազմանշանակ փաստ է բերում Ֆոլիկ Միքայէլեանը. «*Արցախեան*

⁶⁵ Մանրամասն տե՛ս՝ Nazim Mustafa, *Azərbaycan Xalq Cümhuriyyəti işğində (1918-1920)*, Bakı, “ULU”, 2018. նաեւ՝ Назим Мустафа, “Процесс объединения Нахиджевана и Азербайджана в Зенгезуре, в Армении (Հայաստանին Զանգեզուրի միաւորումը՝ ուղղուած Նախիջեւանի եւ Ադրբեջանի բաժանմանը), դիտում՝ 11 Դեկտեմբեր 2019”, *Блог №: 2019/69* (<https://avim.org.tr/Blog/Nahcivan-Ile-Azerbaycan-I-Birbirinden-Ayirmak-Uzere-Tertiplenen-Zengezur-Un-Ermenistan-A-Katilma-Sureci-11-12-2019>). նաեւ՝ Dr. Nazim Mustafa, “Azerbaycan Cumhurbaşkanı Kültürhanesi Bölüm Başkanı,” *Blog No: 69*, էջ 1-18, դիտում՝ 11 Դեկտեմբեր 2019ին). նաեւ՝ Назим Мустафа, *Азербайджанская Демократическая Республика: яркая страница в истории государственности Азербайджана. Материалы международной конференции. 26-30 июня 2018 г., Гянджа*, (Նազիմ Մուստաֆա, *Ադրբեջանական Դեմոկրատիական Հանրապետութիւն. վառ էջ Ադրբեջանի պետականութեան պատմութիւնում. Միջազգային գի-րաժողովի նիսեր, 26-30 Յունիս 2018*, Գանձակ, էջ 400-3 (1905.az/ebdurrəhim-bəy-haqverdiyevə-qarsi-ermənistan-hokumətinin-təskil-etdiyi-quldurluq-hadisəsinin-təfsilati/: nkaa.ru/v-gyandzhe-proxodit-mezhdunarodnaya-nauchnaya-konferenciya-na-temu-adr-yarkaya-stranica-istorii-gosudarstvennosti-azerbajdzhana/), դիտում՝ 25 Մայիս 2021. նաեւ՝ Dr. Nazim Mustafa, “Azerbaycan Cumhurbaşkanı Kültürhanesi Bölüm Başkanı,” *Blog No: 69*, ներբեռնում՝ 16 Յունիս 2020:

⁶⁶ Զօրական, <https://hy.wikipedia.org/wiki/Զօրական>: <https://mil.am/ru/news/3453>: <https://jam-news.net/am/>, մատչում՝ 23 Յուլիս 2021:

շարժման առաջին իսկ օրից Սասուն(Միքայելյան)ը առաջինը տասնեակ մեքենաներով՝ կեանքը վրանգելով, դեռ 1988 թ. մեկնեց Շամխորի շրջանի Չարդախլու, Բադա, Ջագիր գիւղեր եւ այդ գիւղերի բոլոր բնակիչներին «ազատեց նոր եղենից», բերեց Հայաստան»⁶⁷, ինչպէս 2020ի արցախեան Սեպտեմբեր-Հոկտեմբերի պատերազմի օրերին, երբ Մեծ Հայքի Հայոց Արեւելից Կողմանց Ուտիք Աշխարհի կամ նահանգի Գանձակի, Թովուզի, Գետաբէկի, Դաշկեսանի, Խանլարի, Ղազախի եւ Շամքորի շրջանների գրեթէ ողջ հայ բնակչութիւնը առանց յապաղելու հայկական իշխանութիւնների ջանքերով արագ «տեղափոխուեց» ՀՀ:

Ազգամիջեան կոիւնտերի եւ յարաբերութիւնների սրման եւ յետագայ դէպքերի չարագուշակ շրջադարձերի հետեւանքով Զօրականում բնակութիւն հաստատեցին Շամխորի շրջանի Չարդախլու գիւղից եկած 310 եւ Շահումեանի շրջանից բռնագաղթուած 12 ընտանիքներ, որտեղ ներկայումս կայ 300 տնտեսութիւն՝ շուրջ 1400 բնակիչներով⁶⁸: Փոխարէնը՝ Քէօրփըլուի ադրբեջանցի բնակիչները հաստատուեցին Ադրբեջանի հայաբնակ եւ հինաւուրց հայկական Գարդմանքի Չարդախլու բնակավայրում, որը ազերիների կողմից վերանուանուել է Չանլիբէլ (թուրքերէն «Մշուշոտ լեռ»):

2015 Մայիսի 3ին Տաւուշի մարզի Զօրական գիւղում տեղի է ունեցել ԽՍՀՄ կրկնակի հերոս, ԽՍՀՄ մարաշախտ Յովհաննէս Բաղդամեանի եւ ԽՍՀՄ հերոս, ԽՍՀՄ զրահատանկային զօրքերի գլխաւոր մարաջախտ Համազասպ Բաբաջանեանի կիսանդրիների, ինչպէս նաեւ Հայոց Ցեղասպանութեան, 1941-45՝ հայրենական մեծ պատերազմի եւ արցախեան հերոսամարտի զոհերի յիշատակին նուիրուած երեք խաչքարերի բացման հանդիսաւոր արարողութիւնը⁶⁹:

Գիւղի բնակիչների մի մասը իր ժամանակին դիմել են ՀՀ առաջին նախագահ Լ. Տէրպետրոսեանին խնդրանքով՝ Զօրականը վերանուանել Նոր Չարդախլու, ինչն աւարտուել է անարդիւնք, եւ պատճառաբանութիւն է բերուել, թէ Չարդախլուն հայկական անուն չէ:

Աւելացնենք, որ Չարդախլուի եւ հայկական միա գիւղերի հայութեան մի մասն էլ տուժեցին կամ զոհուեցին Սպիտակի 1988ի դեկտեմբերեան երկրաշարժի ժամանակ, իսկ մի մասն էլ ինչպէս 1915 ազգասպանութիւնից յետոյ բռնեցին գաղթականի ցուպը եւ հանգրուան գտան Ռուսաս-

⁶⁷ «Քաղքանտարկեալ Սասուն Միքայելյանի քոյր՝ Ֆոլիկ Միքայելյան, Արծիւները պէտք է ազատ լինեն», *Հայկական ժամանակ*, 6 Մայիս 2010:

⁶⁸ Զօրական-Տաւուշի մարզ, <https://papikqocharyan.wordpress.com/2016/12/:http://tavush.agro.am/index.php?id=4469> , դիտում՝ 23 Յուլիս 2021:

⁶⁹ «Ռազմինֆօ-Զօրական գիւղում տեղադրուել են մարշալներ Բաբաջանեանի եւ Բաղդամեանի յուշարձանները», 4 Մայիսի 2015 (<https://mil.am/ru/news/3543:https://razm.info/63696> , դիտում՝ 23 Յուլիս 2021:

տանի Դաշնութեան Դոնի Ռոստով քաղաքում եւ այլ երկրամասերում ու երկրներում: Եւ այսպէս, Ադրբեջանի ցեղասպան քաղաքականութեան արդիւնքում հայկական Չարդախլուն դադարեց հայկական լինելուց, իսկ նրա հայ բնակչութիւնը դարձաւ գաղթական, ակնկալելով, որ մի օր կրկին կը վերադառնայ հայրենի բնակավայրը:

THE RESISTANCE BATTLES FOUGHT FOR ARMENIAN CHARDAKHLU

(Summary)

VANIK HRANT VIRABYAN (vanik.virabyan@mail.ru)

In the Middle Ages the Armenian village of Chardakhlu was known as Khachisar. Several monuments, khachkars and remains of fortresses, tombstones, and churches are witness to the history of this village, located in Soviet Azerbaijan, east of Lake Sevan.

The village was the pillar and guarantor of security for over 15 Armenian villages surrounding it. On the other hand, the occupation of these areas by the Tatars in the 17th-18th centuries was a must for them to provide pasturing grounds for their cattle. Therefore, as the area was inhabited by indigenous Armenians, a conflict of interest led to numerous clashes between the two communities.

The paper narrates the recurring pattern of clashes between the invading Tatars and the defending Armenians. The start of the self-determination war in Mountainous Karabagh gave the Azeri state a good chance to get rid of the Armenians in Chardakhlu and its surroundings. Eventually these Armenian villages were overrun by the Azeris, and the Armenian history of these villages came to an abrupt end in the late 20th century.